

ՄԵԶՄՈՒՄԻ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pera 65

Համբարձար իրի տեղում համար 20.000.000.000 իրի տեղում
կիսկերի հեղ զորանոց:

مجموعه اخبار
بک اوغلی تقسیم جادوسی نومبر 70

Համբարձար միջնակարգ խոստումներ իրի տեղում 20.000.000.000 իրի տեղում — իրի տեղում Պեյոյունտա ճանապարհի քաղաքում 63

ՍՏԱՆԱ

Ս. ԵՆՈՒՆԻ. — ՏՈՒՆԱՆ ՕՐԵՐ. —
ԱՍՏԻՃԱՆ. — Ս. ՊՕՂՈՍԻ ԿՂԵՐԱՆՈՑԻ
ԲԱՑՈՒՄԸ. — ԿՈՂՈՍԻ. — ԲՆԵՆԻՆԻ
ԹԻՒՆԻՔ ԵՒ ՀԱՆՆԻՍ ԵՄԵՆԱՆԱ

Ա.

Գիշերուան խաղաղ լուսնուան մէջ
որքան քաղցր կը հնչէ կոչնակն.
արդէն հաւատացեալներ՝ ոտքի վը-
րայ են և փոխանակուել կը պատ-
րաստուին երթալ եկեղեցի ար-
համարելով օղոյ խաղաղութիւնն, յոգ-
նութիւնն և քունն: Բիշ յետոյ սա-
նալ կը լնցուի ժողովրդեան բազ-
մութեամբ և կատարեալ յափշտա-
կութեամբ մտիկ կ'ընեն հոգեշունչ
շարականներն և օրհնեղութիւններն
և յիշատի Բրիտանիայն պահ մը կը
վերանայ այդ հոգեխօսիկ տաղերէն,
բուրբալի բուրբալէն և երգեցիկ
մանկանց մեղանայ շնչաբերէն: Եկե-
ղեցին ալ սովորականէն աւելի բան
մ'ունի, իւր ջանքը և մտքը հա-
մալ վառուած են, պատկերներուն
և խորաններուն առջեւ լուսապար-
տումը և բուրբալի ամպ ամպ բու-
րումը, ինչ աղբիւրիկ հմայք մ'ուն-
նին, հաւատացեալը պահ մը կը մոռ-
նայ զինքը և հովիւներուն հետ մոռ-
նին առջեւ կ'երգէ... Ծնունդի գի-
շեր՝ հոգեկան յուզման և յափշտակ-
ման անբացատրելի խիւղը և ժպի-
տը կը թողու ամէն գէժքերու վրայ,
որոնք հոգեւոր և սրտին թաքուն
խորշերուն մէջ անճառ տապաւորու-
թիւն մը կ'ընեն:

Երբ այս կրօնական վսեմ և սըր-
բաղան արարողութեանց վրայ ալ
նախագահէ Ս. Պօղոս Եպիսկոպոսը:
Երբ նման ամէն տեսակէտով Տի-
պալ Եկեղեցական մը, անկարելի
կ'ըլլայ երեւակայել ժողովրդեան շեր-
մաւանդութիւնը և բարեպաշտու-
թիւնը: Ծնունդի առթիւ իւր պեր-
ճախօս չրթներ աւելի աղբիւրիկ կ'ըս-
կըսին և ժողովրդեան աչքին առաջ
կը պատկերացնեն երկնային մարկին
իտեալը: Օրինակներ հանելով Մա-
նուկ Յիսուսի կեանքէն և խոնարհ
ծնունդէն և յետոյ մասնաւոր կը
շնչաւ Սրբութեան պէտքը:

Արարողութիւնները մին միւսէն
շքեղ կը կատարուին, Պատարագն ալ
յոյժ հանդիսաւոր կ'անցնէ: Մի ա-
ւելի խորհրդաւոր տեսարան մը կը
պարզուի, հաւատացեալք ի երկիւ-
ղածութեամբ կը մօտենան Սրբու-
թեան, համբարձար անկարելի կ'ըլլայ,
երանի՝ և բերեալներ՝ այնպիսիներ:

ըուն, որովհետեւ իրենց ամբողջ հոգ-
ւով և սրտով փարած են Բրիտանի-
անցութեան:

Բ.

Նոյնպէս շատ հանդիսաւոր կեր-
պով տօնուեցաւ Արհ. Գերապայծա-
ռին անուան տօնախմբութեան օրը,
նմանը շատեալ բազմութիւն մը
եկած էր եկեղեցին: Գործը խօսե-
լու տոնին շատ ոգեւորուած էր, բն-
աւոր օրինակներ հանեց Ս. Պօղոսի
արդիւնաւոր կեանքէն: Եկեղեցական
արարողութեան յետոյ երկուսեւ բազ-
մութեան առջեւ թէրդեան վարժա-
րանի սաներ՝ ներկայացում մը տուին
և աշակերտաց կողմանէ ալ դպրո-
ցին մէջ աւանդուած հինգ լեզուներ
ըով ուղերձներ կարդացուեցան: Իւր-
րոցական այս հանգէսը շատերու
կողմանէ գնահատուեցաւ: Հանդէսը
փակեց Արհ. Հիմնադիրը, խրատեց
աշակերտները և Վեհ. Սուրբան Հա-
միտ Բ. Կայսեր արեւշատութեան
համար աղօթքներ ըրաւ:

Գ.

Ամսոյ 17ին, Կիրակի օրը, արտա-
սովոր բազմութիւն մը ժողոված էր,
տեղոյս Հայ-Կաթողիկէ հասարա-
կութեան Եպիսկոպոսանիտ Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ եկեղեցին: Արարո-
ղութիւնները և Պատարագը յոյժ շը-
քեղ և հանդիսաւոր անցան: Արհ.
պատարագի խօսեցաւ եկեղեցական
կարգերու նախապետութեան վրայ
և մասնաւոր շնչոյց բարեգործու-
թեան վրայ և մասնաւորապէս բա-
րենէր ժողովուրդը բարեգործու-
թեան հրաւիրեց:

Ս. Պօղոս պանծալի առաքելոյն
անուամբ մկրտուած՝ Կղերանոցի
պաշտօնական բացումը կատարուե-
ցաւ և այս առթիւ ալ Կղերանոցի
վրայ ալ երկարօրէն խօսեցաւ: Բիշ
յետոյ Կղերանոցի 7 հատ քահանա-
յոցները իրենց համար պատրաս-
տուած Կղերանոցի համազգեստը
հագած խորանին առջեւ նկատուեց
Ատանացի և Հաճնցի աշակերտներէ
կը բաղկանան: Այս Կղերանոցի ա-
շակերտաց թիւը երթալով պիտի
բազմանայ:

Յետոյ յոյժ շքեղ կերպով և հան-
դէսով Յարգ. Ռաֆայէլ Վ. Պայեանի
Ծայրագոյնի աստիճանը տրուեցաւ:
Գերաշնորհ Ռաֆայէլ Վ. Վարդապետ
23 տարեկան էր վեր Ատանայի թե-
միւրը կը գտնուի, ինք սրբակրօն և
բարի կղեր մ'է բաւին բովանդակ
նշանակութեամբ: Եկեղեցական այս
հանդիսաւոր արարողութեան յետոյ,
Արհ. Առաջնորդը վարդապետներով

և դպրոցներով բազմ անգամ արեւ-
ցաւ: Հոն ժողովրդեան երկուսեւ բազ-
մութեան առաջ, Առաջնորդարանի
դիւանապետներէն Անտոն Եփ., Վեհ.
Սուրբանին կենաց արեւշատութեան
համար աղօթքներ կարդաց:

Դ.

Գիւլտ. 17ին իրիկունը Արհ. Գե-
րապայծառը կոչուեց Տրապիզոն Ա-
ռաջնորդարանի պաշտօնէութիւնը,
աղբիւր երեւելիներէն ոմանք, ուսուց-
չական մարմինը, գերապատար աշա-
կերտաց հետ զիշերթիկները: Շատ
ուրախ անցաւ այդ իրիկունը, բաժա-
կանաւորութիւններ եղան հրաւիրեալ-
ներու ոմանց կողմանէ և բաժակներ
պարպուեցան Վեհ. Սուրբանին և
Գերեջ. Կաթողիկոսին և Արհ. Գե-
րապայծառին կենացը: Բիշ յետոյ
Արհ. Պօղոս Եպիսկոպոսը ժամա-
նաւոր շնորհակալիք յայտնեց վար-
դապետներուն, Առաջնորդարանի դի-
ւանապետ և գործակատար Մեծ.
Յարգիւ Եփ. Եփեմեանի, ուսուցչաց,
վերջապէս ամբողջ հրաւիրեալներուն,
որոնք իրեն կ'աջակցին:

Վեհ. Սուրբանին համար աղօթք-
ներ ըրաւ և ամէնէն յետոյ դերակա-
տար աշակերտք ներկայացում մը
տուին, որ շատ ոգեւորութեամբ ան-
ցաւ:

Ե.

Ապրիլ 13 օր առաջ Փրանսական
հիւպատոսն՝ ընկերակցութեամբ
Թարգման Լ. Խուպէսէրեան Եփ.,
այցելութեան եկաւ Եպիսկոպոսարա-
նը և այս առթիւ վարժարանի գաղղ-
ուսման վրայ տեղեկութիւն ունենալ
փափաքելով, առաջնորդուեցաւ ու-
սումնարան, ուր թէեւ անակնկալ,
այլ մանրամասն հարցաքննութիւններ
ըրաւ գաղղ. լեզուաւ ուսումնարանի
Ա. Բ. Կարգերուն Գաղղ. քերականու-
թեան քննութեան պահուն՝ երբ
գլխաւորին կոտորներ կը հարցնէին
տղայոց, հիւպատոսը տրուած պա-
տախաններէն անհունս գոհ մը-
նալով ըսաւ. «Այս քերականական
հարցաքննութիւնը Փրանսացի պատանիներ-
ուն համար ալ դիւրին չէ»:

Յետոյ պարիկները քննեց. անոնք
ալ քաջ կերպով և առանց քաշուե-
լու պատասխանեցին ամէն հարց-
մանց: Ատանացի պարիկները բաւա-
կան պարիկներու արժանի եղան:
Հիւպատոսը 2 ու կէս ժամուան մէջ
թէրդեան նախակրթարանին և ու-
սումնարանին աշակերտներուն գաղղ.
լեզուն քննեց և շատ ուրախ մնաց,
թէրդեան վարժարանին մէջ գաղղ.

լեզուի տրուած կարեւորութեան
Յետոյ խորին շնորհակալութիւն յայտ-
նեց Արհ. Հիմնադիրին և լաւ տպա-
ւորութեան տակ դնաց:

Ատանա, 27 Դեկտ. 1900

Տ. Յ. Պ.

ԱՋԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Գեղեցիկներ ամսոյն ինն էր. այն
օր կը կատարուէր Անարատ Յղու-
թեան գեղեցիկ տօնը, Հաճն
քաղաքին մէջ, ուր ամբողջ Հայ-Կա-
թողիկէ քրիստոնէայ աշխարհը կրօ-
նական սուրբ հոգեւոր վառուած էր:
Այդ օրը Եպիսկոպոսական փոխա-
նորդ Գեր. Հ. Վերթման Վ. Ուղեւե-
եան Ս. Պատարագ մատուց ի հան-
գիստ ազնիւ հոգւոյ աշխուժարմ
Արիստակէս Եփ. Աշխարհաբի:

Ս. Պատարագի ժամանակ շէրն
պակսել քաղցրանուած երգիչք, սա-
նունք Ազարեան վարժարանին, ո-
րոնք տեսնելով իրենց բարեբարին
հանգստեան Զայնաւոր Պատարագը,
ցուցոցին իրենց կարողութիւնը և
սէրը: Հրեշտակային քաղցր նուագ-
ներ նուագեցին, այս ամէնքը քաղցր
ներշնչանակութեամբ և հիանալի
կարգով:

Ժողովուրդը շատ յուզուած էր.
բոլոր սիրտերը տրամած էին, բո-
լոր հոգիները տխրութեամբ լեցուած
էին, և ինչպէս չըլլար, քանի որ այն
օրը թե՛ անմահ բարեբարին հոգւոյն
Ս. Պատարագ կը մատուցուէր և թե՛
անոր անուան յիշատակին շնունած
դպրոցին, Ազարեան վարժարանի
բացման տարեդարձը կը տօնուէր:

Արիստակէս Ազարեան, մեր ան-
նման ու դպրոցաւոր բարեբարը ա-
ռանց ոչ մէկու դրդումին, առաջին
անգամ ինք գաղափարը յղացաւ
հոս դպրոց մը հիմնելու և անմիջա-
պէս, այս գաղափարը յղանալէն ետ-
քը առանց բնաւ վարանելու՝ լուր
ղրկեց մեր աղքատասէր ու կրթասէր
Առաջնորդին երկու դպրոց բանալ
մին մանչերու յատուկ, իսկ միւսը
աղջիկներու: Բարոյական աշխատու-
թիւնը ու յոգնութիւնը մեր յառաջ-
դիմասէր Առաջնորդին կողմէ, իսկ
նիւթականը՝ իրմէ: Այս գեղեցիկ ու
աղքատու գաղափարը գործադրուե-
ցաւ քիչ ժամանակի մէջ, որով Հաճ-
նոյ ժողովուրդը ունեցաւ երկուսեւ
կարեւոր վարժարան մը ուր իր զաւե-
նեքը՝ մանչերն ու աղջիկները պիտի
կրնային լաւ կրթութիւն մը ստանալ
Այս յառաջադէմ՝ երկուսեւ վարժա-
րանս կը գտնուի Հաճնոյ գեղեցիկ
Գալէստէր մահալէն կոչուած թա-

